ԿԱՐԾԻՔ

Հայկուհի Մանվելի Մուրադյանի «Մշակութային քաղաքականության նոր համակարգի ձևավորումը Հայաստանում. խորհրդային ավանդույթը, ազգային ռեսուրսները և եվրոպական հեռանկարները (XX դարի վերջ և XXI դարի սկիզբ)» Թ.006 «Մշակութաբանություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Կորսված հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի և Արցախյան երկրորդ պատերազմից հետո հազարավոր հայկական մշակութային կոթողների նկատմամբ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից համակարգված և հետևողականորեն վարվող բնաջնջման քաղաքականությունը կամ դրանց ազգային պատկանելության գիտակցված խեղաթյուրումը տարիներ շարունակ լայն քննարկման առարկա է հայաստանյան հասարակական-քաղաքական շրջանակներում, հատկապես այդ խնդիրներով զբաղվող գիտնական հետազոտողների շրջանում: Ավելին, մեր օրերում ազգային մշակույթի պահպանման, ժառանգորդման և հանրահռչակման խնդիրը առավել զգայուն թեմաներից է նաև Հայաստանի ներքաղաքական կյանքում: Պետական քաղաքականության մակարդակով ի՞նչ քայլեր են ձեռնարկվում այդ ուղղությամբ, տեղի ունեցող համաշխարհայնացման գործընթացներում ձևավորվո՞ւմ է արդյոք մշակութային քաղաքականության նոր մոտեցումներ, և ի՞նչ հայեցակարգերի շրջանակներում, դիտարկվում է արդյո՞ք մշակույթը ազգային անվտանգության կարևոր բաղադրամաս: Մշակութային քաղաքականության և արդի նոր համակարգի ձևավորման համար ի՞նչ դասեր կարելի է քաղել խորհրդային ամբողջատիրական հասարակության և դրանում ձևավորված ազգայինի փորձից:

Հ. Մուրադյանի «Մշակութային քաղաքականության նոր համակարգի ձևավորումը Հայաստանում. խորհրդային ավանդույթը, ազգային ռեսուրսները և եվրոպական հեռանկարները (XX դարի վերջ և XXI դարի սկիզբ)» ատենախոսությունում, ի պատիվ իրեն, ասենք, որ կարողացել է գտնել այս և նմանատիպ մի շարք հարցերի գիտականորեն հիմնավորված պատասխաններ: Անշուշտ, այդ խնդրի համակողմանի վերլուծությունը կիրառական կարևոր նշանակություն ունի Հայաստանի մշակութային քաղաքականության գաղափարախոսության հստակ ձևակերպման, զարգացման և մոդելի ընտրության համար: Բնական էր, որ, ելնելով թեմայի կարևորությունից, կատարվել են

Сканировано с CamScanner

խորհրդային և հետխորհրդային Հայաստանի մշակույթի ձևավորման հիմնախնդրին առնչվող բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ: Մինչդեռ, մեր կարծիքով, Հայաստանում մշակութային քաղաքականության նոր համակարգի ձևավորման և դրա հետազոտման խնդիրը որպես գիտական ուսումնասիրության հիմնահարց առաջին անգամ իր հստակ ձևակերպումն է ստացել այս ատենախոսության շրջանակում՝ դառնալով կարևոր գիտական նորույթ:

Գիտական նորույթը նաև նրանում է, որ այդ հիմնախնդրի վերաբերյալ կատարվել է միջգիտակարգային ուսումնասիրություն՝ օգտագործելով մշակութային մարդաբանության, պատմագիտության, մշակույթի սոցիոլոգիայում քաղաքագիտության մեջ ընդունված մոտեցումները: Իմ համոզմամբ՝ Հ. Մուրադյանը այդ հանգրվանին է հասել՝ շնորհիվ մշակույթի ոլորտում վերջին տարիներին ունեցած հարուստ հետազոտական փորձի և ատենախոսությունում կիրառած սկզբունքային մի քանի կարևոր մոտեցումների: Նախ՝ էական է մեթոդի և դրան առնչվող ընթացակարգերի ճիշտ կիրառումը, այն է՝ արխիվային, խորհրդային մամուլի, պաշտոնական փաստաթղթերի բովանդակային և դիսկուրս վերլուծությունը, խորացված հարցազրույցի մեթոդը: Շնորհիվ այդ հետազոտական գործիքների՝ պատկերացում ես կազմում հեղինակի հսկայածավալ աշխատանքի մասին՝ հետազոտել և տեղեկատվություն է հավաքել Հայաստանի բոլոր մարզերի 63 քաղաքային և գյուղական բնակավայրերի մշակույթի տների, 6 ստեղծագործական միությունների վերաբերյալ և կատարել մշակույթի տարբեր ոլորտը ներկայացնող մասնագետների շրջանում 14 փորձագիտական հարցում (Ցանկը տե՛ս հավելվածում: Մշակութային տների և ստեղծագործական միությունների վերաբերյալ հեղինակը կատարել է նաև իր դիտարկումները, որը նաև առկա է ատենախոսությունում, և նպատակահարմար կլիներ, որ այդ մեթոդի մասին նշվեր նաև ներածությունում):

Ներկայացված ատենախոսության համար ուզում եմ առանձնացնել ևս մեկ կարևոր ձեռքբերում՝ մշակույթի հիմնախնդրին վերաբերող՝ արևմտյան մի շարք ճանաչված հեղինակների հրատարակած աշխատությունների օգտագործումը և դրանում տեղ գտած նոր մոտեցումների շրջանակներում վերլուծական նյութի քննարկումը, որոնք տեսական մեթոդաբանական տեսանկյունից դառնում են ատենախոսական աշխատանքի հարուստ հենք:

Сканировано с CamScanner

Անդրադառնանք ատենախոսության կառուցվածքին, որը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, սկզբնաղբյուրներից և օգտագործված գրականության ցանկից ու հավելվածից: Ներածությունում հեղինակը մասնագիտական գրականության և փաստացի նյութերի հիման վրա համոզիչ կարողացել է հիմնավորել թեմայի արդիականությունը, ինչպես նաև վերլուծել մինչ այժմ Հայաստանում և արտերկրում այդ ուղղությամբ հրատարակված գիտական աշխատանքները և այդ հիմնախնդրին ցուցաբերվող իր նոր մոտեցումները: Ներածությունում հեղինակը պատշաճ կերպով անդրադարձել է հետազոտության մեթոդաբանությանը, և հստակ ձևակերպված են հետազոտության հիմնահարցը, նպատակը, հիմնախնդիրները և դրանց շնորհիվ ձեռք բերված գիտական նորույթը: Սակայն մինչև ատենախոսության գլուխներին անդրադառնալը ատենախոսի ուշադրությունը կուզեինք հրավիրել ատենախոսության վերնագրի թվագրման (XX դարի վերջ և XXI դարի սկիզբ) խնդրին, քանի որ առաջին գլխի երկրորդ և երրորդ ենթագլուխները ամբողջությամբ վերաբերում են 1920-30-ական և այնուհետ, 1950-60-ական թթ. խորհրդային մշակութային քաղաքականությանը: Այդ առումով վերնագրում տեղ գտած ժամանակային սահմանափակումը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Մեր կարծիքով, այս գլխում մինչև խորհրդայինին անդրադարձը նպատակահարմար կլիներ, որ պատմական անդրադարձ կատարվեր նաև Հայաստանի Առաջին հանրապետության օրոք գիտամշակութային նոր ինստիտուցիոնալ կառույցների, ազգային մշակույթի հիմքերի ձևավորման հարցերին, որի վերաբերյալ հրատարակվել են մի շարք գիտական աշխատություններ: Այնուհանդերձ, փաստենք, որ առաջին գլխում տեղ գտած խորհրդային մշակութային քաղաքականության ձևավորմանն առնչվող պատմափաստագրական նյութերը քննական վերլուծության է ենթարկել արևմտյան մի քանի տեսությունների շրջանակում: Տեսականորեն հիմնավորված այդ հայեցակարգերի շրջանակներում ատենախոսը խորհրդային մշակութային քաղաքականության երկմաս և եռամաս փուլաբաժանման փոխարեն այն ներկայացրել է հինգ փուլով, որը կարելի է համարել այդ հարցի վերաբերյալ նոր մոտեցում: Այս գլխի երկրորդ և երրորդ ենթագլուխներում քննարկվում և դուրս է բերվում 1920-ական և 1930-ական թթ. ինտերնացիոնալիզմի և «խորհրդային ազգայնականության», 1950-60-ական թթ□

Сканировано с CamScanner

«Խորհրդայինի» և «ազգայինի» համատեղման բացառիկությունը մշակութային քաղաքականության մեջ: Բերված նյութերը հետաքրքիր են դարձնում այդ ենթագլուխների ընթերցումը, բայց որոշ դրույթներ լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն: Անշուշտ, փաստ է, որ 1960-ական թթ. խրուշչովյան «ձնհալի» և ստալինյան բռնապետությունից հետո ազատականացման գործընթացները, մասնավորապես Հայաստանում քաղաքական էլիտայի գործունեությունը (Յակով Զարոբյան, Անտոն Քոչինյան) կարևոր գործոն էին ազգային զարթոնքի ձևավորման համար: Բայց կարծում ենք, որ դրա համար որոշակի պատճառահետևանքային կապ կարելի էր տեսնել նաև Հայաստանում թեկուզ ոչ ֆորմալ հասարակական քաղաքական շարժումների, «Մեծ հայրենադարձության» և այլ երևույթների միջև, որոնք Հայաստանում ոչ միայն արդիականացրին ցեղասպանության, եկեղեցու և ազգային այլ թեմաներ, այլև հայրենադարձների այդ հոծ զանգվածը իր մեծ ներդրումն ունեցավ Հայաստանի մշակութային կյանքի զարգացման և նոր մոտեցումների ձևավորման գործում: Երկրորդ գլուխը, որ ատենախոսը վերնագրել է «ՀՀ մշակութային քաղաքականության նոր հայեցակարգի ձևավորում», բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլուխը՝ « Մշակույթի ոլորտի օրենսդրական դաշտի կարգավորման խնդիրները», մանրամասն քննական վերլուծության է ենթարկել ՀՀ անկախություն շրջանի օրենսդրական դաշտը, և փաստարկված նյութերի հիման վրա դրանց մի մասը որակվում է որպես «խորհրդային օրենքների» ադապտացիա և ռուսական օրենքների կրկնօրինակում: Այս ենթագլխում հեղինակն անդրադարձել է միջազգային կառույցների համագործակցության արդյունքում մի շարք օրենքների ընդունման և արևմուտքի հետ մշակութային համագործակցություն խնդիրներին և Հայաստանում դրանց որոշ մասի հետ կապված դիսկուրսին: Երկրորդ ենթագլուխը, որը հեղինակը վերնագրել է «Մշակույթի տնտեսականացման առաջին փորձերը», նշենք, որ հետաքրքրությամբ է ընթերցվում, քանի որ հեղինակին հաջողվել է մի շարք տեսությունների շրջանակներում հիմնավորել կենտրոնացվածությունից մշակույթի անցումը ապակենտրոնացման քաղաքականության ձևավորմանը, մշակույթի՝ որպես տնտեսական եկամտի նոր աղբյուր դառնալու հանգամանքը, գոյություն ունեցող մոդելների բնութագրմանը և այդ հարցում հայաստանյան առանձնահատկություններին:

Сканировано с CamScanner

Երկրորդ ենթագլուխը, որը նվիրված է հետխորհրդային Հայաստանի մշակութային քաղաքականության զարգացումներին, հեղինակը բաժանել է երեք փուլի՝ հիմք ընդունելով երեք նախագահների գործունեության տարիները և այդ հարցում նրանց ունեցած մոտեցումները: Առաջին՝ 1991-1998 թթ., անցումային շրջանի մշակութային քաղաքականության՝ ազատական մոդելի ձևավորման, երկրորդ՝ 1998-2008 թթ., մշակութային քաղաքականության կայունացման՝ բյուրոկրատական համակարգի վերականգնման, երրորդ՝ 2008-2018 թթ., մշակութային քաղաքականության խառը մոդելի ձևավորման, պետական բյուրոկրատական և ազատական մոդելների համադրման ժամանակաշրջաններ: Ատենախոսության այս հատվածն ընթերցելիս կուզեինք հեղինակի ուշադրությունը հրավիրել հետխորհրդային Հայաստանի մշակութային քաղաքականության ձևավորման հարցում այդ ոլորտի ոչ կառավարական կամ հասարակական կազմակերպությունների դերին, որոնց թիվը կտրուկ աճեց 1990-ական թվականներից: Այդ հարցում դրանց գործունեությունը համակողմանի վերլուծության կարիք ունի, քանի որ հանրային ընկալումներում այն միանշանակորեն չի գնահատվում:

Ատենախոսության վերջին՝ երրորդ գլուխը, որը բաղկացած է երկու ենթագլխից, նվիրված է Հայաստանում խորհրդային և հետխորհրդային շրջանի մշակութային քաղաքականություն ձևավորած հիմնական ինստիտուտների իմաստային և գործառնության փոխակերպումներին՝ գյուղական ակումբների, մշակութային տների, ստեղծագործական միությունների օրինակներով: Առաջին ենթագլխում գյուղական ակումբների և մշակույթի տների գործունեությունը քննարկվել է որպես խորհրդային մշակույթի ձևավորման և զանգվածայնացման գործոն, իսկ երկրորդ ենթագլխում՝ ստեղծագործական միությունները՝ խորհրդային մտավորականության ձևավորման, վերահսկման և կառավարման մեխանիզմների տեսանկյունից: Հեղինակն իրավացիորեն նկատել է, որ մշակույթի տունը ստեղծեց սոցիալական այն միջավայրը, որտեղ խորհրդահայ մշակույթի համատեքստում սկսեցին ձևավորվել նաև ազգային բովանդակությամբ մշակութային արժեքներ: Մտահոգիչ են նաև հետխորհրդային գյուղական մշակութային տների վերաբերյալ հեղինակի ներկայացրած նյութերը, թե ինչպես մի շարք համայնքներում դրանք

Сканировано с CamScanner

ուղակի սեփականաշնորհվել և վաճառվել են, ֆինանսական միջոցների բացակայության պայմաններում փակվել և վերածվել լքված տարածքների, փախստականների համար դարձել կացարաններ, սգո և հանդիսությունների արարողության օբյեկտների և այլն: Հեղինակը ուշագրավ մոտեցումներ է ցուցաբերել նաև ստեղծագործական միությունների ձևավորման պատմության, գործունեության մեթոդների և հետխորհրդային փուլում դրանց փոխակերպումների նյութերի վերլուծության հարցում: Անշուշտ, այդ առումով ներկայացված վերլուծական նյութը շատ կարևոր է, սակայն այս ենթագլուխը բովանդակային առումով կհարստանար, եթե հեղինակը իր իսկ մատնանշած մեր օրերում այդ կառույցների «սպառված» լինելու թեզին զուգահեռ որպես այլընտրանք քննարկեր նաև այդ ոլորտում ոչ ֆորմալ խմբերի և կառույցների (գրողների, նկարիչների, երաժիշտների, ճարտարապետների ստեղծած, ընդ որում՝ նաև վիրտուալ տիրույթում) դերը, գործունեությունը և ազդեցությունը մշակութային քաղաքականության զարգացման գործում:

Բարձր գնահատելով Հ. Մուրադյանի աշխատանքը, որն առանց վարանելու կարող ենք համարել մշակութաբանության բնագավառում կարևոր ներդրում՝ միաժամանակ նշեմ ատենախոսության կառուցվածքին վերաբերող մի քանի նկատառում և առաջարկություն.

- Ատենախոսի ուշադրությունն եք ուզում հրավիրել թեմայի վերնագրին «Մշակութային քաղաքականության նոր համակարգի ձևավորումը Հայաստանում. խորհրդային ավանդույթը, ազգային ռեսուրսները և եվրոպական հեռանկարները (XX դարի վերջ և XXI դարի սկիզբ)», որտեղ վիճահարույց է եվրոպական տերմինը, որը մեր կարծիքով նեղացնում է այդ գործընթացին Հայաստանի մասնակցության կամ կրած ազդեցության խնդիրը: Միգու՞ցե արմտյան հեռանկարներ (օրինակ, այդ թվում նաև ամերիկյան մշակույթը), որը ավելի ընկալելի կդարձներ Հայաստանի նոր մշակութային քաղաքականության ձևավորման համար համաշխարհայնացման գործընթացների համատեքստը:

Сканировано с CamScanner

➢ Որոշակի վերանայման կարգ ունի ատենախոսության գլուխները, մասնավորապես առաջին գլխի, որի երկրորդ և երրորդ ենթագլուխները վերաբերում են 1920-1930-ական թթ. և 1950-1960-ական թթ. խորհրդային մշակութային քաղաքականության ձևավորմանը և երրորդ գլխի երկու ենթագլուխները, որտեղ վերլուծվում են խորհրդային և հետխորդային շրջանի մշակույթի տների և ստեղծագործական միությունների գործունեությունը և հետխորհրդային ձևափոխումները: Մեր կարծիքով դրանք նպատակահարմար էր միավորել մեկ գլխում, որը հնարավորություն կտար այդ հիմնախնդիրը դիտարկել իր ամբողջականության մեջ և խուսափել նաև կրկնություններից (օրինակ, 37 և 108 էջերում, որտեղ կրկնվում է 1920թ Լենինի որոշմամբ ստեղծված քաղաքական-լուսավորական կազմակերպության մասին պարբերությունը):

➢ Ատենախոսական աշխատանքում լրացուցիչ փաստարկման և հիմավորման կարիք ունի երկրորդ գլխի երրորդ ենթագլխում (Երեք նախագահ՝ երեք մշակութային քաղաքականություն) հեղինակի կողմից Հայաստանի մշակութային քաղաքականությունը երեք մոդելների բաժման խնդիրը. Լևոն Տեր Պետրոսյանի նախագահության տարիների մշակույթը բնորոշելով, որպես լիբերալ-ազատական, Ռոբերտ Քոչարյանին՝ բյուրոկրատական համակարգի վերականգնման, Սերժ Սարգսյանին՝ մշակութային քաղաքականության խառը՝ պետական բյուրոկրատական և լիբերալ-ազատական մոդելների համադրում: Մեր կարծիքով այդ փոփոխություններ ավելի շատ կատարվել են ինստիտուցիոնալ և օրենսդրական դաշտի մակարդակով, բայց բովանդակային առումով մշակութային քաղաքականությունը երեք նախագահների օրոք էական տարբերություն չի դիտարկվել և այն շարունակում է կրել խորհրդային բեռը:

➢ Ատենախոսությունում հեղինակը հաճախ է օգտագործում օտարածին հասկացություններ. Օրինակ, կոնցեպտ, դոմինանտ, հոմոգենիզացիա և այլն: Նպատակահարմար կլիներ, որ հեղինակը օգտագործեր դրանց հայերեն թարգմանությունը:

Сканировано с CamScanner

Ներկայացված նկատառումները որևէ կերպ չեն ստվերում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը, և դրանք առաջարկություններ են հեղինակի հետագա հետազոտական աշխատանքների համար:

Ատենախոսի հրատարակած աշխատություններն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը և հիմնական ձեռքբերումները:

Հայկուհի Մանվելի Մուրադյանի կողմից ներկայացված «Մշակութային քաղաքականության նոր համակարգի ձևավորումը Հայաստանում. խորհրդային ավանդույթը, ազգային ռեսուրսները և եվրոպական հեռանկարները (XX դարի վերջ և XXI դարի սկիզբ)» Թ.006 «Մշակութաբանություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունն ավարտուն գիտական աշխատանք է, ունի շատ կարևոր տեսական և գործնական նշանակություն, իսկ եզրահանգումները կարող են նպաստել և խթանել Հայաստանում նոր մշակութային քաղաքականության տեսական և գործնական մոտեցումների ձևավորմանը և արդյունավետ բարեփոխումների իրականացմանը:

Թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջները, ուստի միջնորդում ենք մասնագիտական խորհրդին շնորհել Թ.006 «Մշակութաբանություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
առաջատար գիտաշխատող, էթնոլոգիոլոգիայի բաժնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր
Միհրան Վարդգեսի Գալստյան
30.08.2021

Сканировано с CamScanner